ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ 2

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: Սկսած 2019 թվականից իրականացվել են աշխատանքներ ապահովագրական ծածկույթի գնահատման, հիմնական ծառայությունների փաթեթի որոշման, համակարգում ըստ բնակչության առանձին խմբերի ծախսերի որոշման ուղղությամբ: 2019 թվականին հանրային քննարկման է ներկայացվել ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառվել է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից, իսկ 2023 թվականը համարվում է ԱՀԱ ներդրման նախապատրաստման տարի, որի ընթացքում պետք է իրականացվեն հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթներում ներառվող առողջապահական ծառայությունների և դեղերի գների, նորմատիվների ծախսերի հաշվարկում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ փորձարկման փուլի ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է առողջապահական տվյալների հավաքագրման և վերլուծության խորհրդատվության իրականացում համապատասխան մասնագետների ներգրավմամբ՝ սույն աշխատանքի նկարագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետներում իրականացնելու, ինչպես նաև ԱՀԱ ներդրման այլ միջոցառումներով նախատեսված ուղղություններով առողջապահական տվյալների հավաքագրման և վերլուծության խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության ներդրման հետ կապված առողջապահական տվյալների հավաքագրման և վերլուծության խորհրդատվության տրամադրում, այդ թվում

1. Մասնակցություն բժշկական կազմակերպությունների տվյալների բազաների ուսումնասիրություն և դրանցից հավաքագրման ենթակա տվյալների կազմի,

կառուցվածքի, արտահանման և ներմուծման հնարավորությունների վերաբերյալ խորհրդատվությանը:

2. Մասնակցություն ծառայությունների և դեղերի գների, նորմատիվների ծախսերի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման, դրանց ներմուծման էլեկտրոնային ձևաչափերի հիման վրա դրանց ավտոմատացման հնարավորությունների ստեղծմանը:
3. Մասնակցություն գների և նորմատիվների հաշվարկման նպատակով հավաքագրված տվյալների նույնականացման, տվյալների բազաների ստեղծման, հիմնական կատալոգների ձևավորմանը՝ դեղեր, բժշկական նշանակության ապրանքներ, հետազոտություններ, վիրահատական միջամտություններ:
4. Այցելություն հարցման մեջ ընդգրկված բուժհիմնարկներ, հարցման անցկացում, տվյալների հավաքագրում և մուտքագրում ձևաչափերում
5. Գների և նորմատիվների հաշվարկման նպատակով ձևավորված հիմնական և լրացուցիչ տվյալների բազաների համադրում հաստատված գործելակարգերի, ուղեցույցների տվյալների հիման վրա ձևավորված բազաների տվյալների հետ:
6. Հիվանդանոցային և ԱԱՊ ծառայությունների մատուցման տարբեր մակարդակներում ուղղակի և վերադիր ծախսերի համադրումներ՝ ելնելով հավաքագրված տվյալների բազաներից,
7. Բժիշկների ըստ մասնագիտությունների աշխատավարձի նորմատիվային մեծության հաշվարկման նպատակով բժշկական կազմակերպությունների փաստացի տվյալների հավաքագրում, անհրաժեշտության դեպքում ճշտումների իրականացում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետի աշխատանքից ակնկալվում է ստանալ հետևյալ արդյունքները;

1. Ծառայությունների և դեղերի գների, նորմատիվների ծախսերի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների բազա:
2. Այցելություն հարցման մեջ ընդգրկված բուժհիմնարկներ, հարցման անցկացում, տվյալների հավաքագրում և մուտքագրում ձևաչափերում
3. Գների և նորմատիվների հաշվարկման նպատակով ձևավորված հիմնական և լրացուցիչ տվյալների բազաներ:
4. Ծախսերի համեմատական գնահատման աղյուսակներ՝ կազմված ըստ բժշկական կազմակերպությունների տեսակների, սեփականության ձևի և

ծախսերի տնտեսագիտական դասակարգման կամ հաշվապահական հաշվառման ստանդարտներով:

5. Բժիշկների աշխատավարձի համեմատական գնահատման աղյուսակներ՝ կազմված ըստ բժշկական կազմակերպությունների տեսակների, սեփականության ձևի, բժիշկների մասնագիտությունների, պայմանագրերի տեսակի:

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետը, ըստ անհրաժեշտության, առողջապահության ֆինանսավորման խորհրդատուի/թիմի ղեկավարի կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է մասնակցի սույն աշխատանքի նկարագրով պայմանավորված պրեզենտացիա/ների կազմմանը, նկարագրելով առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները:

ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Առնվազն բարձրագույն տեխնիկական կրթություն կամ տնտեսագիտության, ֆինանսների բնագավառում,
- Առնվազն 5 տարվա փորձառություն բժշկական կազմակերպություններում տվյալների բազաների հետ աշխատանքի
- Առնվազն 3 տարվա առողջապահության ֆինանսական տեղեկատվական համակարգերի հետ աշխատանքի փորձ, այդ թվում բժշկական կազմակերպություններում ֆինանսական կառավարման փորձառություն
- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ տվյալների բազաների կառուցման, ձևաչափերի մշակման, տվյալների համադրումներ իրականացնելու պրակտիկ և վարժ ունակություններ
- Հայերենի և Ռուսերենի լավ իմացություն, Անգլերենի իմացությունը ցանկալի է: Համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, մոտեցումները հիմնավորելու կարողություններ,

հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: